# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N7

## N ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-42/2025/ՏՏԿՎ
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «19» «02» 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալիկանտե» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Բաբինյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով **18.08.2025թ.-ին** կնքված **ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-42/2025/ՏՏԿՎ** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.14 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի վճարման պայմանները և վավերապայմանները**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-42/2025/ՏՏԿՎ** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարից 2026 թվականի կարիքների համար սահմանել **72 000 000 (յոթանասուներկու միլիոն)** ՀՀ դրամը ներառյալ ԱԱՀ-ն, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան, իսկ պայմանագրով նախատեսված մնացած գումարը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-42/2025/ՏՏԿՎ** ծածկագրով պայմանագրի Պատվիրատուի վավերապայմաններում կատարել փոփոխություն՝ **900011046373** ՀՀ-ն փոխարինել **900011042471 ՀՀ**-ով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | «Ալիկանտե» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011042471 | Հ/Հ 1570012604290100 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 01014536 |
| հեռ. 010 59-68-57 | էլ. հասցե՝ alikante60@mail.ru |
| էլ. հասցե gnumner@mia.gov.am | |
| Ա. Ֆիդանյան | Տնօրեն՝ Ս.Բաբինյան |
| /ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/ (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված
«19» «02» 2026
ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-42/2025/ՏՏԿՎ ծածկագր
գնման պայմանագրի թիվ 7 համաձայնագ

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայություն /03.01.01.02/ ՀՀ դրա | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50611400/1 | Մասնագիտացված անվտանգության համակարգերի սպասարկման և պահպանման ծառայություններ | | 36 000 000 | 36 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 | 72 000 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**հեռ. 010 59-68-57**
**էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**Ա. Ֆիդանյան**
**/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Ալիկանտե» ՍՊԸ**
**Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155₂**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570012604290100**
**ՀՎՀՀ 01014536**
**էլ. հասցեն՝ alikante60@mail.ru**

**Տնօրեն Ս.Բաբինյան**
**(ստորագրություն) Կ.Տ.**